իւրեանց Ամբատայ, և ինքեանք գնացին 'ի Կոստանդնուպօլիս: Սա իշխեաց ամս Գ.:

Ամբատ՝ որդի Լեւոնի՝ եղբայր Հեթմոյ և Թորոսի՝ խեռիւ ընկալաւ զԹագն յեղբօրէն. և Թորոս և Հեթում դարձան 'ի Սիս՝ ձեռնտուութեամբ Թաթարաց՝ զԱմբատ ընկենուլ, և ինքեանք նստիլ: Եւ մինչ յայս խորհրդեան կային Թորոս և Հեթում, լուեալ Ամբատ ըմբռնեաց զնոսա և եդ 'ի բանտի ուրոյն: Եւ կամակցութեամբ իշխանացն զԹորոս խեղդեաց և զՀեթում կուրացոյց. որ իշխեաց ամս Գ.:

Կոստանդին՝ որդի Լեւոնի՝ եղբայր Թորոսի՝ Հեթմոյ և Ամբատայ, եկեալ 'ի վերայ Սսոյ, և եկեալ զօրքն Հայոց 'ի դաշտն՝ պատերազմեցան ազգայինք ընդ ազգայինս, եղբայր ընդ եղբօր. և սուր քարշեալ ընդ դէմ իրերաց՝ յառաւօտին՝

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան